02/20/06 - «Դիզայն» մասնագիտության դիմորդների համար
«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ» քննական առարկայի առաջադրանքի

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

Քննական առաջադրանք - ընտրված երկրաչափական մարմինների համակցմամբ ստեղծել ծավալային եռաչափ կոմպոզիցիա՝ կատարելով այն երկու կետով կառուցվող հեռանկարի կամ աքսոնոմետրիայի կառուցման սկզբունքով՝ լուսաստվերային մշակմամբ:

Առաջադրանքի կատարման համար վիճակահանության սկզբունքով թվով 10 (տաս) երկրաչափական մարմիններից (խորանարդ, գլան, գունդ, կոն, քառանկյուն բուրգ, վեցանկյուն պրիզմա, ուղղանկյուն պրիզմա, սալիկ՝ քառանկյուն, սալիկ՝ վեցանկյուն, տափօղակ), ընտրվում են 5 (հինգ) երկրաչափական մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը քննական առաջադրանքում պարտադիր է կիրառել 2 և ավել անգամ:

Կատարման - նյութ աշխատանքը կատարվում է A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման)՝ գրաֆիտե սև մատիտով:
Թույլատրվում է գծագրական գործիքների կիրառումը:

Նպատակ - ներկայացված կոմպոզիցիայի դիտարկմամբ ստուգել և գնահատել դիմորդի ստեղծագործական կարողությունները և կատարողական հմտությունները՝ քննական պահանջների պահպանմամբ:

Քննական պահանջներ -

- Առաջադրանքը կատարել A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման), հորիզոնական կամ ուղղահայաց դասավորությամբ, կարևորելով ընդհանուր կոմպոզիցիայի տեղադրման և համաչափական սկզբունքները:
- Կոմպոզիցիայի ամբողջական կառուցում՝ բացառելով խորը հեռանկարի բազմապլանային կատարման սկզբունքը:
- Ապահովել ինչպես ընդհանուր կոմպոզիցիայի, այնպես էլ կոմպոզիցիայում կիրառված առանձին երկրաչափական մարմինների՝ երկու կետով հեռանկարի կամ աքսոնոմետրիայի կառուցումը:
- Կատարել առաջադրանքի լուսաստվերային մշակում՝ գծանկարի շտրիխային տեխնիկայով:
- Ծավալային կոմպոզիցիայի դիտման կետը և պայմանական լույսի աղբյուրը ընտրել ըստ հայեցողության:
- Աշխատանքում կիրառել համակցման (մեկ մարմինը մյուսով հատման), մասնատման և հանման սկզբունքները:
- Վիճակահանության սկզբունքով ընտրված թվով 5 (հինգ) երկրաչափական մարմինները կոմպոզիցիոն առաջարկում պարտադիր կիրառել յուրաքանչյուրը 2 և ավել անգամ:

Աշխատանքի կատարման համար տրվում է 4 ժամ (240 րոպե)՝ առանց ընդմիջման:

Աշխատանքի գնահատման համար կարևորվում է ներկայացված պահանջների ապահովումը:

Նախապես ծածկագրված քննական աշխատանքը ստուգվում և գնահատվում է քննական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անհատապես՝ համաձայն կից ներկայացված գնահատման չափանիշների: Ստացված գումարային միավորը միջինացվում է 20.00 (քսան) միավորի սահմանում: Դրական են համարվում 08.00 (ութ) և բարձր միավորները (համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի № 597-Ն որոշման), գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ:

Քննական աշխատանքի գնահատման չափանիշներ

№	Հիմնական չափանիշներ	№	Պարամետրեր	Միավորներ	
1.	Կոմպոզիցիոն լուծում	1	A3 ձևաչափում կոմպոզիցիայի գրագետ տեղադրում	5	20
		2	Կոմպոզիցիոն մտահղացման ինքնատիպ և կերպարային լուծում		
		3	Երկրաչափական մարմինների համակցման սկզբունքի (մեկ մարմինը մյուսով հատման) կիրառում		
		4.	Երկրաչափական մարմինների մասնատման սկզբունքի կիրառում		
		5.	Երկրաչափական մարմինների հանման սկզբունքի կիրառում		
2.	Կառուցում	1.	Համակցվող՝ (մեկ մարմինը մյուսով հատվող) երկրաչափական մարմինների գրագետ կառուցում	5	
		2.	Մասնատված երկրաչափական մարմինների գրագետ կառուցում		
		3.	Երկրաչափական մարմիններից ռելիեֆային ձևափոխում և գրագետ կառուցում՝ հանման եղանակով		
		4.	Երկու կետով կառուցվող հեռանկարի կամ աքսոնոմետրիայի պահանջների պահպանում		
		5.	Երկրաչափական մարմինների կառուցման գծային թույլ արտահայտում		
3.	Կատարողական հմտություններ և կարողություններ	1.	Լուսաստվերային մշակում	5	
		2.	Տոնային մշակում		
		3.	Գծանկարի շտրիխային տեխնիկայի տիրապետում		
		4.	Կոմպոզիցիայի դիտման կետի ընտրություն		
		5.	Համաչափությունների պահպանում		
4.	Աշխատանքի ամփոփում	1.	Աշխատանքի ավարտվածություն	5	
		2.	Աշխատանքի մատուցում		
		3.	Աշխատանքի արտահայտչականություն		
		4.	Կոմպոզիցիոն մտահղացման բարդություն		
		5.	Կոմպոզիցիոն մտքի լիարժեք բացահայտում		